Վարպետը

հեղինակ՝ Հարրի Հարիսոն
թարգմանիչ՝ Ջուլիետա Ղազարյան (ռուսերենից)
աղբյուր՝ «Ուխտագնացություն դեպի երկիր»

Ծերուկի դեմքը աներեւակայելիորեն չարախինդ արտահայտություն ուներ՝ հավաստի նշանն այն բանի, որ ինչ-որ մեկը ստիպված է լինելու լավ քրտնել: Քանի որ մենք մենակ էինք, ես հեշտությամբ գլխի ընկա, որ աշխատանքը հենց ինձ է բաժին ընկնելու: Եվ իսկույն հարձակվեցի նրա վրա, հիշելով, որ հարձակումը ամենալավ պաշտպանությունն է:

— Ես ազատվում եմ աշխատանքից: Ու նեղություն մի՛ կրեք հայտնելու, թե ինչ կեղտոտ գործ եք գտել ինձ համար, որովհետեւ արդեն չեմ աշխատում: Դուք հարկ չունեք Ընկերության գաղտնիքները բացելու իմ առջեւ:

Իսկ նա նայում է ինձ ու քմծիծաղ տալիս: Մատով սեղմելով պուլտի կոճակը, նա նույնիսկ հռհռաց: Ճեղքից նրա սեղանին սողաց հաստլիկ պաշտոնական փաստաթուղթը:

— Ահա ձեր պայմանագիրը— հայտարարեց Ծերուկը:— Այստեղ նշված է, թե երբ եւ որտեղ պիտի աշխատեք: Պողպատի եւ վանադիումի ձուլվածքից պատրաստված այս թիթեղիկը հնարավոր չէ ոչնչացնել նույնիսկ մոլեկուլյար քայքայիչով:

Ես կռացա, խլեցի թիթեղիկն ու վեր նետեցի: Դեռ չէր հասցրել վայր ընկնել, երբ ձեռքումս հայտնվեց լազերը, ու պայմանագրից միայն մոխիր մնաց:

Ծերուկը նորից սեղմեց կոճակը, եւ նրա սեղանին սողաց մի նոր պայմանագիր: Այժմ նա այնպես էր ծիծաղում, որ բերանը հասավ ականջներին:

— Ես ճիշտ չարտահայտվեցի… պետք էր ասել ոչ թե պայմանագիրը, այլ պատճենը… ոնց որ սա:

Նա արագ ինչ-որ նշում կատարեց:

— Ես ձեր աշխատավարձից հանեցի տասներեք դոլար՝ պատճենի արժեքը: Բացի այդ, շինության ներսում լազեր օգտագործելու համար դուք տուգանվում եք հարյուր դոլար:

Ես պարտված էի եւ, գլխիկոր, սպասում էի հարվածին: Ծերուկը ձեռքով շոյում էր իմ պայմանագիրը:

— Համաձայն պայմանագրի, դուք չեք կարող թողնել աշխատանքը: Երբեք: Այդ իսկ պատճառով ես մի փոքր գործ ունեմ, որը հաստատ ձեր սրտովը կլինի: Կենտավրոսի շրջանի փարոսը չի գործում: Այդ փարոսը «Մարկ III» տիպի է…

— Դա ի՞նչ տիպ է,— հարցրի Ծերուկին: Ես վերանորոգել էի հիպերտարածության փարոսները Գալակտիկայի ամենատարբեր ծայրերում եւ համոզված էի, որ ի վիճակի եմ նորոգելու ցանկացածդ տարատեսակը: Բայց այդպիսի փարոսի մասին լսած անգամ չկայի:

— «Մարկ III»,— խորամանկորեն ժպտալով կրկնեց Ծերուկը:— Ես ինքս էլ դրա մասին իմացա միայն այն ժամանակ, երբ արխիվային բաժինը փորփրեց գտավ դրա բնութագիրը: Գտել են ամենահին գրապահոցի անկյուններից մեկում: Երկրացիների կառուցած

փարոսներից ամենահինը, թերեւս, դա է: Դատելով այն բանից, որ փարոսը գտնվում է Կենտավրոսի մոլորակներից մեկի վրա, շատ հավանական է, որ դա հենց ամենաառաջին փարոսն է:

Ես նայեցի գծագրերին, որ Ծերուկը մեկնել էր ինձ, եւ սարսափեցի:

— Հրեշավոր բան է: Դա ավելի շուտ նման է օդեգործարանի, քան փարոսի… ու բարձրությունն էլ մի քանի հարյուր մետրից պակաս չի լինի: Ես նորոգող եմ, եւ ոչ թե հնագետ: Մետաղի այս ջարդոնը երկու հազար տարեկան կլինի: Հրաժարվեք դրանից ու նորը կառուցեք:

Ծերուկը սեղանի վրայով առաջ եկավ ու շնչեց ուղղակի երեսիս:

— Նոր փարոս կառուցելու համար մեկ տարի է պետք եւ ահագին փող: Բացի այդ, այս հնությունը գտնվում է մեր գլխավոր երթուղիներից մեկի վրա: Մեր որոշ նավերը հիմա տասնհինգ լուսատարի տեւող կեռմաններ են անում:

Նա ետ ընկավ բազկաթոռի թիկնակին, ձեռքերը սրբեց թաշկինակով եւ գլխիս կարդաց հերթական քարոզը Ընկերության հանդեպ իմ պարտքի մասին:

— Մեր բաժինը պաշտոնապես կոչվում է շահագործման եւ վերանորոգման բաժին, այնինչ իրականում պետք է կոչվեր վթարային: Հիպերտարածության փարոսները այնպես են կառուցվում, որ դրանք հավերժ ծառայեն… կամ, ծայրահեղ դեպքում, աշխատում են այդպես կառուցել: Եվ եթե դրանք շարքից դուրս են գալիս, ապա, ուրեմն, ամեն անգամ վիճակը լուրջ է լինում՝ ինչ-որ մի մասի փոխարինումով չես պրծնի:

Եվ սա ինձ ասում էր այն մարդը, որը չաղլիկ աշխատավարձ էր ստանում արհեստական կլիմայով առանձնասենյակում շալվարը մաշելու համար:

Ծերուկը շարունակում էր խոսել:

— Էհ, եթե հնարավոր լիներ միայն մասե՛րը փոխել: Այդ ժամանակ ես կունենայի պահեստամասերի մի տորմիղ եւ կրտսեր մեխանիկներ, որոնք իրենց գործը կանեին առանց ավելորդ խոսակցությունների: Բայց ուր է, ամեն ինչ ճիշտ հակառակն է: Ես ունեմ թանկարժեք նավերի մի տորմիղ, ու նրանց վրա ինչ ասես չկա… Իսկ անձնակազմերը ձեզ նման անբաններ են:

Նա մատը տնկեց իմ կողմը, իսկ ես մռայլված գլխով արեցի:

— Ոնց կուզեի՛ ձեզ բոլորիդ վռնդել: Ձեզանից յուրաքանչյուրի մեջ նստած է տիեզերական շրջմոլիկ, մեխանիկ, ինժեներ, զինվոր, ավազակ ու էլի սատանան գիտի թե ինչ, այն ամենը, ինչ հարկավոր է իսկական վարպետին: Ես հարկադրված եմ լինում ահաբեկել ձեզ, կաշառել, շանտաժի ենթարկել, որ ստիպեմ կատարել մի հասարակ առաջադրանք: Եթե դուք մինչեւ կոկորդներդ կուշտ եք, ապա պատկերացնրե՛ք իմ վիճակը: Իսկ նավերը պետք է թռչեն: Փարոսները պետք է գործեն:

Վճռելով, որ այդ անմահ ասացվածքը նա արտասանեց որպես բարեմաղթանք, ես վեր կացա տեղիցս: Ծերուկը ինձ նետեց «Մարկ III»-ի փաստաթղթերն ու խորասուզվեց իր թղթերի մեջ: Երբ ես հասել էի արդեն դռանը, նա գլուխը բարձրացրեց եւ նորից մատը տնկեց իմ կողմը.

— Ու չմխիթարվեք այն մտքով, որ ձեզ կհաջողվի խուսափել պայմանագրի կատարումից: Մենք կալանք կդնենք Ալգոլե II-ում ձեր ունեցած բանկային հաշվի վրա շատ ավելի շուտ, քան դուք կհասցնեք վերցնել ձեր փողերը:

Ես ժպտում էի, իբր մտքովս անգամ չի անցել հաշիվս գաղտնի պահել: Սակայն վախենում եմ, որ այդ ժպիտս շատ ողորմելի պիտի լիներ: Ծերուկի լրտեսները օր օրի ավելի արդյունավետ են աշխատում: Քայլելով դեպի շենքի դուռը, ես փորձում էի մի ճար գտնել, որ աննկատ կերպով փողերս վերցնեմ բանկից: Բայց գիտեի, որ հենց հիմա Ծերուկը մտածում է, թե ինչպես խորամանկի ինձ:

Այս ամենից տրամադրությունս բարձրացավ, դրա համար էլ նախ մտա պանդոկ, ու նոր հետո գնացի տիեզերական:

Այն ժամանակամիջոցում, երբ նավը պատրաստում էին թռիչքի, ես հասցրի գծել իմ երթուղին: Կենտավրոսի Պրոկսիմայի խափանված փարոսին ամենից մոտ էր Բետա Ցիրցինիայի մոլորակներից մեկի վրա եղած փարոսը, ու ես նախ ճանապարհվեցի այնտեղ: Հիպերտարածությունում այդ կարճ ճանապարհորդությունը տեւեց ընդամենը ինը օր:

Փարոսների նշանակությունը հասկանալու համար նախ պետք է իմանալ, թե ինչ բան է հիպերտարածությունը: Շատ քչերը գիտեն ինչ է դա, բայց դժվար չէ մի բան հասկանալը՝ այնտեղ, ուր բացակայում է տարածությունը, սովորական ֆիզիկական օրենքները կիրառելի չեն: Այնտեղ արագությունը եւ հեռավորությունը հարաբերական հասկացություններ են, այլ ոչ կայուն, ինչպես սովորական տիեզերքում:

Հիպերտարածություն մտնող առաջին նավերը չգիտեին որ կողմ գնան, հնարավոր չէր նույնիսկ որոշել՝ շարժվո՞ւմ են նրանք ընդհանրապես: Փարոսները լուծեցին այդ խնդիրը եւ մատչելի դարձրին ողջ Տիեզերքը: Կառուցված լինելով մոլորակների վրա՝ նրանք վիթխարի չափով էներգիա են արտադրում: Այդ էներգիան վերածվում է ճառագայթման, որը ներթափանցում է հիպերտարածություն: Ամեն մի փարոսը ճառագայթման հետ ուղարկում է նաեւ իր կոդային ազդանշանը, որով եւ կողմնորոշվում են հիպերտարածության մեջ: Նավերի թռիչքները իրականացվում են ըստ փարոսի եռանկյունացման եւ քառակուսացման, միայն թե այստեղ կանոնները ուրիշ են, յուրատեսակ: Դրանք շատ բարդ են եւ անկայուն, բայց եւ այնպես գոյություն ունեն, եւ նավորդը կարող է ղեկավարվել դրանցով:

Հիպերտարածության վրայով թռչելու համար պետք է ճշտորեն հաշվել ամենաքիչը չորս փարոս: Երկար թռիչքների համար նավորդները օգտագործում են յոթից ութ փարոս: Այդ իսկ պատճառով կարեւոր է յուրաքանչյուր փարոսը, դրանք բոլորն էլ պետք է աշխատեն: Այ, հենց այստեղ էլ մենք ենք անցնում գործի՝ վթարայիններս:

Մենք ճանապարհորդում ենք այնպիսի նավերով, որոնց մեջ ամեն ինչից կա մի քիչ: Նավ անձնակազմը բաղկացած է մեկ մարդուց: Դա բավական է մեր գերարդյունավետ վերանորոգող սարքավորումը ղեկավարելու համար: Աշխատանքի բնույթից ելնելով, մենք ժամանցի մեծ մասն անցկացնում ենք սովորական թռիչքների մեջ, սովորական տարածությունում: Թե չէ ինչպե՞ս կգտնենք վնասված փարոսը:

Հիպերտարածության մեջ փարոսը չես գտնի: Օգտագործելով մյուս փարոսները, կարելի է հնարավորին չափ մոտենալ վնասվածին, եւ միայն այդքանը: Այնուհետեւ

ճանապարհորդությունն ավարտվում է սովորական տարածության մեջ: Եվ հաճախ այդ ամենը տեւում է ամիսներ:

Այս անգամ գործը կարծես հաջող էր ստացվում: Ես ուղղություն վերցրի դեպի Բետա Ցիրցինիայի փարոսը եւ ուղերթային բլոկի օգնությամբ սկսեցի լուծել կողմնորոշման դժվարին խնդիրը ութ կետով, օգտագործելով ճանապարհին տեսածս բոլոր փարոսները: Հաշվիչ մեքենան ինձ տվեց հիպերտարածությունից դուրս գալու մոտավոր ուղղությունը: Անվտանգության բլոկը, որը ոչ մի կերպ չեմ կարողանում քանդել եւ դեն նետել, մտցրեց իր ճշգրտումները:

Ինձ որ մնա, ավելի լավ է հիպերտարածությունից դուրս թռչեմ մի որեւէ աստղի մոտ, եւ ոչ թե ժամանակ ծախսեմ կրիայի պես սողալով սովորական տարածությունում: Երեւում է, տեխնիկական բաժինը եւս նույն կերպ է մտածել: Անվտանգության բլոկը շատ ամուր է սարված մեքենայի մեջ եւ, որքան էլ որ ցանկանաս, հնարավոր չէ կործանել՝ հիպերտարածությունից դուրս թռչելով մի որեւէ արեւի մեջ: Ես համոզված եմ, որ այստեղ չեն գործում մարդասիրական դատողությունները: Պարզապես նավը թանկ է ընկերության համար:

Նավային ժամանակով անցավ քսանչորս ժամ, ու ես հայտնվեցի սովորական տարածության մեջ ինչ-որ տեղ: Վերլուծող ռոսոտը ինչ-որ բան էր փնթփնթում եւ սկսեց ուսումնասիրել բոլոր աստղերը, դրանց սպեկտրները համեմատելով Կենտավրոսի Պրոկսիմայի սպեկտրի հետ: Վերջապես նա հնչեցրեց զանգը եւ ամպը վառեց: Ես կպա ակնապակուն:

Ֆոտոտարրի օգնությամբ որոշելով իսկական մեծությունը՝ ես այն համեմատեցի բացարձակ մեծության հետ ու ստացա հեռավորությունը: Այնքան էլ վատ չէ, ինչպես կարծում էի, վեց շաբաթվա ճանապարհ է, մի քանի օր ավել կամ պակաս: Երթուղու գրառումը դնելով ավտոպիլոտի մեջ, ես արագացման ժամանակի համար փոկերով ինձ կապեցի նավի հատուկ հատվածամասում եւ քնեցի:

Ժամանակն արագ անցավ: Ես տասներկուերորդ անգամ վերասարեցի իմ խցիկը եւ սկսեցի անգիր անել միջուկային ֆիզիկայի հեռակա դասընթացը: Ընկերությունը աշխատավարձը բարձրացնում է նոր մասնագիտությունների տիրապետելու համար: Սակայն այդպիսի հեռակա դասընթացները արժեքավոր են ինքնին, քանի որ նախապես երբեք չես կարող ասել, թե ինչ գիտելիքներ կարող են քեզ պետք գալ: Այս ամենը, ինչպես նաեւ նկարչությունն ու մարմնամարզությունը, օգնում էին ինձ սպանելու ժամանակը: Ես քնած էի, երբ հնչեց մոլորակի մոտիկությունն ազդարարող տագնապի ազդանշանը:

Երկրորդ մոլորակը, որտեղ ըստ հին քարտեզների գտնվում էր փարոսը, արտաքուստ խոնավ էր եւ սպունգի պես ծակոտկեն: Ես մեծ դժվարությամբ գլուխ հանեցի հինավուրց ցուցումներից եւ, վերջապես, գտա ինձ հարկավոր շրջանը: Հայտնվելով մթնոլորտի սահմաններից դուրս՝ ես «Թռչող աչքին» ուղարկեցի հետախուզության: Մեր գործում նախապես գիտեն, թե երբ եւ որտեղ կարելի է վտանգի ենթարկել սեփական կաշին: «Աչքը» լիովին հարմար էր այդ նպատակի համար:

Նախնիները բավական խելք են ունեցել փարոսը կողմնորոշիչ տեղում կառուցելու համար: Նրանք դա կառուցել էին ուղիղ գծի վրա, երկու լեռնագագաթների արանքում: Ես հեշտությամբ գտա այդ գագաթները եւ «աչքին» բաց թողեցի առաջին լեռնագագաթից դեպի երկրորդի ուղղությամբ: «Աչքը» ե՛ւ առջեւի, ե՛ւ ետեւի կողմից ուներ ռադարներ,

դրանցից ազդանշանները ամպլիտուդային կորերի ձեւով հասնում էին օսցիլոգրաֆի էկրանին: Երբ երկու լեռնագագաթները համընկան, ես պտտեցի «աչքի» ղեկավարման բռնակները, ու նա սկսեց վայր իջնել:

Ապա անջատեցի ռադարը, միացրի հեռահաղորդիչը ու նստեցի էկրանի առաջ, որ հանկարծ բաց չթողնեմ փարոսը:

Էկրանը առկայծեց, հետո պատկերը դարձավ հստակ, եւ իմ տեսադաշտում հայտնվեց… մի վիթխարի բուրգ: Ես հայհոյեցի ու սկսեցի «աչքին» վազեցնել շրջանագծով, դիտելով բուրգին հարող տեղանքը: Դա մի հարթ, ճահճոտ, որեւէ բլրակից զուրկ վայր էր: Տասը մղոնանոց շրջանագծում կանգնած էր միայն այդ բուրգը, իսկ նա որոշակիորեն ոչ մի կապ չուներ փարոսի հետ:

Իսկ գուցե ես սխալվո՞ւմ եմ:

Ավելի ցած իջեցրի «աչքը»: Բուրգը կոշտ ու կոպիտ քարե կառույց էր, առանց որեւէ զարդանախշի: Ինչ-որ մի բան էր փայլում նրա գագաթին: Ես ավելի ուշադիր նայեցի եւ տեսա, որ ջրով լցված ավազան է: Այդ տեսնելուն պես գլխովս մի աղոտ միտք անցավ:

«Աչքը» անջատելով շրջանագծի ուղու վրա, ես սկսեցի քրքրել «Մարկ III»-ի գծագրերը եւ… գտա այն, ինչ հարկավոր էր ինձ: Փարոսի ամենավերեւում կար տեղումները հավաքելու հարթակ եւ ջրավազան: Եթե ջուր կա, ուրեմն փարոսն էլ դեռեւս գոյություն ունի բուրգի ներսում: Բնիկները, որոնց նույնիսկ չէին էլ նկատել փարոսը կառուցող ապուշները, փարոսը շրջափակել էին վիթխարի քարերից կառուցված հոյակապ բուրգով:

Ես նորից նայեցի էկրանին ու հասկացա, որ իմ «աչքը» թռչում է շրջանաձեւ ուղեծրով, բուրգից ընդամենը քսան ոտնաչափ բարձրությամբ: Քարե զանգվածի գագաթն այժմ լցված էր ինչ-որ մոդեսներով, որոնք երեւի այստեղի բնակիչներն են: Նրանք փայտեր էին նետում, կրակում էին ինքնանետերից, աշխատելով խփել «աչքին»: Քարերի ու նետերի ամպը բռնել էր չորս կողմը:

Ես «աչքը» վեր բարձրացրի, հետո տարա մի կողմ եւ ղեկավարման բլոկին առաջադրանք տվեցի՝ հետախույզի վերադարձնել նավ:

Հետո գնացի խոհանոց ու մի լավ կոնծեցի: Քիչ է, որ իմ փարոսը բանտարկված է քարե լեռան մեջ, ես հասցրեցի նաեւ զայրացնել բուրգը կառուցած արարածներին: Լա՛վ սկիզբ է աշխատանքի համար, եւ իմ տեղն ով լիներ, որ չդիմեր շշին:

Մեր եղբայր նորոգող-վարպետները սովորաբար աշխատում են հեռու մնալ անդրենածիններից: Նրանց հետ շփվելը մահացու վտանգավոր է: Մարդաբանները, թերեւս, դեմ չեն հանուն գիտության իրենց զոհաբերելուն, բայց դե մեզ նման վարպետը իրեն զոհաբերելու կարիքը բոլորովին չի զգում: Դրա համար էլ փարոսները մեծ մասամբ կառուցվում են անբնակ մոլորակներում: Իսկ եթե ստիպված են լինում փարոս կառուցել բնակելի մոլորակում, ապա սովորաբար այն կառուցում են մի որեւէ անմատչելի տեղում:

Թե ինչո՞ւ էին այս փարոսը կառուցել անդրենածիններին մատչելի տեղում՝ ես դեռ չգիտեի, բայց հույս ունեի, որ կիմանամ ժամանակի ընթացքում: Առաջին հերթին, հարկավոր էր կապ հաստատել: Իսկ դրա համար պետք էր իմանալ տեղի լեզուն:

Նման դեպքի համար ես ունեի վաղուց մշակած եւ անխափան գործող մի սիստեմ: Ես ինքս սարքել էի մի հարմարանք, որը թույլ էր տալիս գաղտագողի հետեւել եւ լսել:

Արտաքուստ այդ գործիքը նման էր մեկ ոտնաչափ երկարության քարի: Երբ այն դրված էր լինում գետնին, ոչ ոք նրա վրա ուշադրություն չէր դարձնում, իսկ այ, երբ սավառնում էր օդում, պատահական ականատեսները շփոթության էին մատնվում նրա տեսքից:

Մողեսների քաղաքը ես գտա բուրգից մոտավորապես հազար կիլոմետր հեռավորության վրա եւ գիշերն այնտեղ նետեցի իմ «լրտեսին»: Նա սուլոցով ներքեւ սուրաց եւ իջավ մի մեծ ջրափոսի ափին, որտեղ սիրում էին լողալ անդրենածինները: Ցերեկը նրանք բավական շատ էին հավաքվում այնտեղ: Առավոտ շուտ, երբ հայտնվեցին առաջին մողեսները, ես միացրի ձայնագրիչը:

Մոտավորապես հինգ տեղական օր հետո թարգմանիչ-մեքենայի հիշողության բլոկում գրանցված էին անհամար քանակությամբ ամեն տեսակ խոսակցություններ, ու ես արդեն առանձնացրել էի որոշ արտահայտություններ: Դա անելը շատ հեշտ է, եթե դուք աշխատում եք մեքենայական հիշողությամբ: Մողեսներից մեկը ինչ-որ բան ասաց մյուսի հետեւից, եւ սա ետ շրջվեց: Ես այդ արտահայտությունը նմանեցրի մեր մարդկային «հեյ»-ի հետ ու հարմար առիթի էի սպասում, որ ստուգեմ ենթադրությանս ճշտությունը: Նույն օրը, հարմար պահ ընտրելով, երբ մի մողես մենակ էր մնացել, ես գոռացի նրան՝ «հե՛յ»: Բացականչությունս բարձրախոսով հնչեց տեղի լեզվով, ու մողեսը ետ շրջվեց:

Երբ հիշողության մեջ հավաքվեց այսպիսի հենակետային արտահայտությունների բավական մեծ քանակություն, գործի անցավ թարգմանիչ մեքենայի ուղեղը ու սկսեց լրացնել բացթողումները: Հենց որ մեքենան սկսեց թարգմանել լսված խոսակցությունները, ես որոշեցի, որ արդեն ժամանակն է կապ հաստատել մողեսների հետ:

Զրուցակից գտա շատ հեշտությամբ: Նա նման էր կենտավրոսյան հովվի, որովհետեւ նրա խնամակալության տակ էին գտնվում ինչ-որ չափազանց կեղտոտ ստորակարգ արարածներ, որոնք ապրում էին քաղաքից դուրս գտնվող ճահիճներում: Իմ «լրտեսներից» մեկը թեք լանջի մեջ քարայր փորեց ու այնտեղ սպասեց մողեսի հայտնվելուն:

Հաջորդ օրը ես տեսա այդտեղով անցնող հովվին ու միկրոֆոնով շշնջացի նրան.

— Ողջույն, թոռնիկս: Քեզ հետ պապիդ հոգին է խոսում դրախտից:

Ես արդեն գիտեի, որ դա չէր հակասում տեղական հավատալիքներին:

Հովիվը քարացավ տեղում: Մինչեւ նա կհասցներ ուշքի գալ, ես սեղմեցի կոճակը, ու քարայրից նրա ոտքերի մոտ գլորվեցին մի բուռ խեցիներ, որոնք այստեղ դրամի դեր էին կատարում:

— Վերցրու դրախտից ուղարկված այս փողերը, որովհետեւ դու լավ տղա ես:

«Դրախտային» փողերը նախորդ գիշերը հանել էի տեղի գանձարանից:

— Վաղն արի մի քիչ զրուցենք իրար հետ,— գոռացի ես փախչող մողեսի ետեւից: Ու զոհունակությամբ տեսա, որ նա չէր մոռացել «փողերը» վերցնել:

Այնուհետեւ պապիկը դրախտից մի քանի անգամ սրտառուչ խոսեց թոռան հետ, որի վրա անչափ ազդել էին աստվածային պարգեւները: Պապիկը հետաքրքրվում էր իր մահից հետո տեղի ունեցած իրադարձություններով, եւ հովիվը հաճույքով տեղեկացնում էր նրան ամեն ինչի մասին:

Ես ստացա ինձ անհրաժեշտ բոլոր պատմական տեղեկությունները եւ պարզեցի այժմյան վիճակը, որը բնավ չէր կարելի համարել բարենպաստ: Բավական չէ, որ փարոսը փակել էին բուրգով, հիմա էլ այդ բուրգի շուրջը կրոնական պատերազմ էին մղում:

Ամեն ինչ սկսվեց պարանոցից: Հավանաբար, փարոսը կառուցելու ժամանակներում մողեսներն ապրել են հեռավոր ճահիճներում, եւ շինարարները նրանց ոչ մի նշանակություն չեն տվել: Մողեսների զարգացման մակարդակը չափազանց ցածր է եղել, եւ բացի այդ, նրանք ապրել են մյուս մայրցամաքում: Եվ փարոսը կառուցող ինժեներների մտքով անգամ չի անցել, որ բնիկները կարող են այդքան զարգանալ ու հասնել այս մայրցամաքը: Բայց հենց դա էլ տեղի է ունեցել:

Երկրաբանական ոչ մեծ տեղաշարժի հետեւանքով առաջացել է ճահճոտ պարանոց, եւ մողեսներն սկսել են գալ ու բնակություն հաստատել այս հովտում, որտեղ կանգնած էր փարոսը: Եվ այստեղ ստեղծել են իրենց կրոնը: Դա հենց շողշողուն մետաղյա աշտարակն էր, որից անընդհատ թափվում էր կախարդական ջրի շիթը (այդ ջուրը, հովացնելով ռեակտորը, ցած էր թափվում տանիքից, որտեղ հավաքվում էր մթնոլորտից): Ջրի ռադիոակտիվությունը վնասակար ազդեցություն չէր գործում բնիկների վրա: Նրա հարուցած մուտացիաները նպաստավոր էին:

Աշտարակի շուրջը քաղաք կառուցվեց, եւ բազում դարերի ընթացքում փարոսն աստիճանաբար ներգրավվեց բուրգի մեջ: Աշտարակը սպասարկում էին հատուկ քրմերը: Ամեն ինչ լավ էր գնում, մինչեւ որ քրմերից մեկը թափանցեց աշտարակի ներսը եւ կործանեց սուրբ ջրի աղբյուրը: Այդ ժամանակից ի վեր ծայր առան խռովություններն ու երկպառակությունները, կռիվներն ու խառնակությունները: Սակայն սուրբ ջուրն այլեւս չէր հոսում: Այժմ զինված ամբոխները ամեն օր էին գոտեմարտում բուրգի մոտ, իսկ սրբազան աղբյուրը հսկում էին նոր քրմերը:

Եվ ես պետք է մտնեի այդ շիլափլավի մեջ ու վերանորոգեի փարոսը:

Դա անելը դժվար չէր լինի, եթե մեզ թույլ տային գեթ մի քիչ զվարճանալ: Ես կարող էի փոշի դարձնել այդ մողեսներին, կարգի բերել փարոսն ու հեռանալ: Սակայն «տեղական բնակիչները» հուսալի պաշտպանության տակ էին գտնվում: Իմ նավի մեջ սարված էին էլեկտրոնային լրտեսներ (ես դեռ բոլորին չեմ գտել), ու դրանք անպայման կմատնեին ինձ վերադառնալուց հետո:

Մնում էր դիմել դիվանագիտության:

Հառաչելով՝ ես հանեցի պլաստիկից արարած սարքելու համար նախատեսված հարմարանքները:

Համեմատելով ծավալուն լուսանկարները (դրանք հովվի նկարներն էին), ես դեմքիս տվեցի սողունի գծեր: Ծնոտս մի քիչ կարճ է, բերանս շատ քիչ է նման երախի: Բայց մի բան կանեմ:

Ինձ պետք չէր, որ ամենայն ճշտությամբ նմանվեի մողեսի, պարզապես պահանջվում էր մի քիչ նմանություն, որ շատ չվախեցնեմ տեղաբնակներին: Դրա մեջ կա տրամաբանություն: Եթե ես լինեի Երկրի տգետ անդենաթին ու հանդիպեի Սպիկ մոլորակի բնակչի, որը նման է չորացրած խեժի երկու ֆուտանոց գնդի, ապա վախից կմեռնեի: Բայց եթե սպիկացու հագին լիներ պլաստիկ հյուսվածքից հագուստ, որով նա գեթ հեռավոր չափով կնմանվեր մարդու, ապա ես հանգիստ կկանգնեի ու կխոսեի հետը:

Այնպես որ ես ուզում էի մեղմացնել տպավորությունը, հենց որ հայտնվեի կենտավրոսցիների առաջ:

Դիմակը սարքելուց հետո հանեցի գլխիցս եւ ամրացրի կանաչ պլաստիկից սարքած գեղեցիկ պոչավոր հագուստին: Պոչն ինձ անկեղծորեն ուրախացնում էր: Մողեսները առանց հագուստի են ման գալիս, իսկ ես պիտի հետս բազմաթիվ էլեկտրոնային սարքեր վերցնեի: Պոչի պլաստիկը ձգեցի մետաղե կմախքի վրա եւ ամրացրի գոտկատեղիցս: Հետո կմախքը լցրեցի այն ամենով, ինչը կարող էր պետք գալ ինձ, եւ քուղերով կապկպեցի կոստյումս: Հագնվելուց հետո կանգնեցի մեծ հայելու առջեւ: Տեսքս զարհուրելի էր, բայց ես շատ գոհ էի: Պոչը իրանս ձգում էր դեպի ետ եւ ներքեւ, որի պատճառով բադի պես շորորալով էի քայլում, եւ դա է՛լ ավելի էր ինձ նմանեցնում մողեսի:

Գիշերը նավը կանգնեցրի լեռներում, բուրգից ոչ հեռու մի չոր հարթավայրում, ուր երկկենցաղները երբեք չէին հասնում: Լուսաբացից առաջ «աչքը» կպավ ուսիս, ու մենք թռանք: Մենք սավառնում էինք աշտարակի վերեւում՝ երկու հազար մետր բարձրության վրա: Հենց որ լուսացավ, մենք ցած իջանք:

Հավանաբար, դա մի հոյակապ տեսարան էր: «Աչքը», որին քողարկել էի թեւավոր մողեսի կերպարանքով, դանդաղ թափահարում էր ստվարաթղթե պտերոդակտիլի իր թեւերը, ինչը, ի դեպ, ոչ մի առնչություն չուներ այն սկզբունքների հետ, որոնց վրա հիմնվում էր թռչելու նրա ունակությունը: Բայց դա բավական էր, որ ցնցեր տեղաբնակների երեւակայությունը: Ինձ նկատած առաջին իսկ մողեսը գոռաց եւ ընկավ մեջքի վրա: Նրա մոտ վազեցին ուրիշները: Խմբերով՝ նրանք հրմշտում էին, բարձրանում իրար վրա, եւ երբ ես արդեն վայրէջք էի կատարում, տաճարի հրապարակում հայտնվեցին քրմերը:

Արքայավայել արժանապատվությամբ ես ձեռքերս խաչեցի կրծքիս:

— Ողջունում եմ ձեզ, մեծ աստծու ազնվագույն սպասավորներ,— ասացի ես: Հասկանալի է, բարձրաձայն չասացի, այլ միայն շշնջացի լարինգոֆոնի մեջ: Ռադիոալիքները իմ բառերը հասցին թարգմանիչ մեքենային, որը, իր հերթին, բարբառում էր տեղացիների լեզվով, ծնոտիս տակ թաքցրած դինամիկի միջոցով:

Բնիկներն իրար անցան, եւ նույն պահին հրապարակում տարածվեց իմ ասածի թարգմանությունը: Ես ձայնն ուժեղացրի, այնպես որ լսելի լինի ամբողջ հրապարակում:

Ամենաղյուրահավատ բնիկներից մի քանիսը երեսնիվայր ընկան գետնին, մյուսները վայնասունով փախան: Մի սասկածամիտ մողես բարձրացրեց նիզակը, բայց երբ «աչք» պտերոդակտիլը բռնեց նրան ու գցեց ճահճի մեջ, ոչ ոք այլեւս չփորձեց նման բան անել: Քրմերը շատ բան տեսած ժողովուրդ էին. ուշադրություն չդարձնելով մյուս մողեսների վրա՝ նրանք չէին շարժվում տեղներից ու ինչ-որ բան էին շշնջում: Ես ստիպված էի վերսկսել գրոհը:

— Չքվիր, հավատարիմ նժույգ,— ասացի «աչքին» եւ միաժամանակ սեղմեցի ափիս մեջ պահած փոքրիկ պուլտի կոճակը:

«Աչքը» վեր նետվեց մի փոքր ավելի արագ, քան ես կուզեի. օդի դիմադրությունից կոտրված նրա պլաստիկի կտորները ցած թափվեցին: Մինչ ամբոխը ինքնամոռաց հետեւում էր այդ համբարձմանը, ես ուղղվեցի դեպի տաճարի մուտքը:

— Ես ուզում եմ ձեզ հետ խոսել, օ՛ ազնվագույն քրմեր,— ասացի ես:

Մինչ նրանք կորոշեին, թե ինչ պատասխան տան ինձ, ես արդեն տաճարի ներսում էի, որը բուրգի ստորոտին կից մի ոչ մեծ կառույց էր: Հնարավոր է, որ առանձնապես շատ «տաբուներ» չէի խախտել՝ ինձ չկանգնեցրին, ուրեմն, ամեն ինչ կարծես լավ է գնում: Տաճարի խորքում երեւաց կեղտոտ ջրով ավազան: Նրա մեջ լողում էր մի զառամյալ սողուն, որն ըստ երեւույթին պատկանում էր տեղական ղեկավարությանը:

Ես շորորացի նրա կողմը, իսկ նա սառը ձկնային հայացք նետեց վրաս ու ինչ-որ բան բլթացրեց:

Թարգմանիչ մեքենան շշնջաց ականջիս.

— Հանուն տասներեքերորդ մեղքի, ասա՝ ո՞վ ես դու եւ ի՞նչ ես փնտրում այստեղ:

Ես նրբագեղորեն թեքեցի թեփուկավոր մարմինս եւ ձեռքով ցույց տվի առաստաղը:

— Ձեր նախնիները ինձ ուղարկել են, որ օգնեմ ձեզ: Ես եկել եմ, որպեսզի կյանքի կոչեմ Սրբազան աղբյուրը:

Իմ ետեւում խուլ աղմկեցին մողեսները, բայց առաջնորդը ոչ մի բառ չասաց: Նա դանդաղ սուզվում էր ջրի մեջ, մինչեւ որ դրսում մնաց միայն աչքը: Ինձ թվում էր, թե լսում եմ ինչպես է շարժվում նրա ուղեղը մամռակալած ճակատի տակ: Հետո նա դուրս թռավ ջրից եւ դեպի ինձ տնկեց վերջավորությունը, որից կաթկթում էր ջուրը:

— Դու խաբեբա՛ ես: Դու մեր նախնի՛ն չես: Մենք…

— Լռի՛ր,— որոտացի ես, թույլ չտալով նրան հասնել այդքան հեռու, որտեղից նա արդեն չէր կարողանա ետ գալ:— Ես ասացի, որ ձեր նախնիներն են ինձ ուղարկել… Ես չեմ պատկանում ձեր նախնիների թվին: Մի ճգնիր վնաս պատճառել ինձ, այլապես զայրույթը նրանց, ովքեր գնացել են այլ աշխարհ, կթափվի քո գլխին:

Ասելով այս խոսքերը, ես սպառնալից շարժում արեցի մյուս քրմերի կողմը, եւ իմ ու նրանց արանքը մի փոքրիկ նռնակ նետեցի: Հատակին մի մեծ ճաքեր առաջացավ, իսկ որոտն ու ծուխը բավական շատ էին:

Քրմապետը որոշեց, որ իմ փաստարկները համոզիչ են, եւ անմիջապես շամանների խորհուրդ հրավիրեց: Դա, հասկանալի է, տեղի ունեցավ հանրային ավազանում, ու ես էլ էի ստիպված մտնել այնտեղ: Մենք բացեցինք երախներս ու բլթբլթացինք մոտ մեկ ժամ, եւ այս ընթացքում վճռվեցին օրակարգի բոլոր գլխավոր կետերը:

Ես իմացա, որ քրմերն այնքան էլ վաղուց չեն հայտնվել այստեղ, բոլոր նախորդ քրմերին եփել են եռացող ջրի մեջ այն մեղքի համար, որ թույլ են տվել ցամաքի Սրբազան աղբյուրը: Ես նրանց բացատրեցի, որ ժամանել եմ միայն մեկ նպատակով. օգնել նրանց՝ վերակենդանացնելու ջրի հոսքը: Քրմերը որոշեցին ռիսկի դիմել, եւ մենք միասին դուրս եկանք ավազանից: Ցեխը շիթ-շիթ հոսում էր մեր վրայից եւ թափվում հատակին: Փակ եւ մողեսների կողմից հսկվող դուռը տանում էր դեպի բուրգի ներսը: Երբ այն բացեցին, քրմապետը դիմեց ինձ:

— Դու, անկասկած, գիտես օրենքը,— ասաց նա:— Քանի որ նախկին քրմերը չափազանց հետաքրքրասեր էին, այժմ նոր օրենքը բարբառում է, որ միայն կույրերը կարող են մտնել սրբության սրբոցը:

Ես պատրաստ եմ գրազ գալու, որ նա ժպտում էր, եթե միայն հին ճամպրուկի նմանվող նրա երախի ճեղքից երեւացող երեսուն ժանիքներով կարելի է ժպտալ:

Նա իսկույն նշան արեց սպասավորին, եւ սա բերեց փայտածուխով եւ շիկացած երկաթներով կրակարանը: Ես բերանս բաց կանգնել ու նայում էի, թե ինչպես նա խառնեց ածուխները, դրանց միջից հանեց ամենակարմիր ձողիկը ու եկավ իմ կողմը: Նա արդեն նշան էր բռնել իմ աջ աչքին, երբ ես վերստին ստացա խոսելու շնորհը:

— Այդ օրենքը, անշուշտ, ճիշտ է,— ասացի ես:— Կուրացնելն անհրաժեշտ է: Սակայն տվյալ դեպքում դուք ինձ պիտի կուրացնեք սրբության սրբոցից դուրս գալուց հետո, եւ ոչ թե հիմա: Ես պետք է աչքեր ունենամ, որ տեսնեմ ինչ է պատահել Սրբազան աղբյուրին: Երբ ջուրը նորից կհոսի ներքեւ, ես կծիծաղեմ ու ինքս էլ աչքս դեմ կանեմ շիկացած երկաթին:

Մի րոպե պահանջվեց, որպեսզի քրմապետը խորհի ասածներիս վրա ու համաձայնի ինձ հետ: Դահիճը խռխռաց եւ ածուխը գցեց կրակարանի մեջ: Դուռը ճռռոցով բացվեց, ու ես մեն-մենակ հայտնվեցի մթության մեջ:

Բայց ոչ երկար… Մոտիկից ինչ-որ քստքստոց լսվեց: Ես լապտերը վառեցի: Խարխափելով ինձ էին մոտենում երեք քուրմ, նրանց ակնախնձորների տեղում երեւում էր կարմիր, վառված հյուսվածքը: Նրանք գիտեին, ես ինչ եմ ուզում եւ, ոչ մի խոսք չասելով, ինձ տարան:

Ճաքճքված եւ փշրվող քարե աստիճանները մեզ հասցրին մի ամուր մետաղյա դռան մոտ, որի վրա փակցված ցուցանակին հնաոճ տառերով գրված էր. «Փարոս «Մարկ-III», կողմնակի անձանց մուտքն արգելվում է»: Դյուրահավատ շինարարները իրենց հույսը դնում էին միայն ցուցանակի վրա. դուռը կողպեք չուներ: Մողեսներից մեկը ուղղակի շրջեց բռնակը, եւ մենք հայտնվեցինք փարոսի ներսում:

Ես բացեցի իմ քողարկիչ կոստյումի կրծքի «կայծակը» եւ հանեցի գծագրերը: Հավատարիմ քրմերի հետ միասին, որոնք սայթաքելով գալիս էին իմ ետեւից, գտա այն սենյակը, որտեղ գտնվում էր կառավարման պուլտը, ու միացրի լույսը: Վթարային մարտկոցները գրեթե լիցքաթափվել էին, էլեկտրականությունը բավականացնում էր միայն աղոտ լույս տալու համար: Ինդիկատորները եւ սանդղակները, կարծես լավ վիճակում էին, դրանք փայլում էին, ի՛նչ-ի՛նչ, բայց սրանց անընդհատ մաքրումը ապահովված էր:

Ես կարդացի սարքերի ցուցումները, ու իմ ենթադրությունները հաստատվեցին: Ջերմեռանդ մողեսներից մեկը ինչ-որ ձեւով բացել էր անջատիչներով մեկուսարանը եւ մաքրել էր դրանք: Պատահաբար նա սեղմել էր անջատիչներից մեկը, ու դա էլ հենց եղել էր վթարի պատճառը:

Ավելի ճիշտ, հենց այդտեղից էլ սկսվել էր ամեն ինչ: Վթարը չէր կարելի վերացնել անջատիչի հասարակ չրխկոցով, հետո ջրի կափույրը նորից կաշխատեր: Այդ կափույրը կարելի էր օգտագործել միայն վերանորոգման դեպքում, այն բանից հետո, երբ ջուրը կլցվեր ռեակտորի մեջ: Երբ ջուրն անջատվում էր գործող ռեակտորից, սկսում էր եզրից թափվել, եւ ավտոմատ ապահովիչ սիստեմը շիթն ուղղում էր ջրհորի մեջ:

Ես շատ հեշտությամբ կարող էի ջուրը բաց թողնել, բայց ռեակտորի մեջ վառելանյութ չկար:

Վառելանյութով զբաղվելու ոչ մի ցանկություն չունեի: Էներգիայի նոր աղբյուր դնելը շատ ավելի հեշտ էր: Իմ նավում ես ունեի մի հարմարանք, որն իր չափերով մոտ տասը անգամ փոքր էր «Մարկ III-ի» վրա դրվաց հինավուրց դույլից, եւ ամենաքիչը մոտ չորս

անգամ ավելի հզորություն ուներ: Բայց դա անելուց առաջ ես մի լավ զննեցի ամբողջ փարոսը: Գոնե մի բան պիտի որ մաշված լիներ երկու հազար տարվա ընթացքում:

Ծերուկները՝ մեր նախնիները, պետք է արժանվույնը հատուցենք նրանց, լավ էին կառուցել: Մեխանիզմների իննսուն տոկոսը շարժվող մասեր չունեին եւ չէին էլ կարող մաշվել: Օրինակ, խողովակը, որով ջուրն իջնում էր տանիքից: Այդ խողովակի պատերի հաստությունը երեք մետր էր… եւ դա այն դեպքում, երբ իմ գլուխը հազիվ թե մտներ այդ խողովակի մեջ: Որոշ փոքր-մոքր գործեր գտնվեցին ինձ համար, ու ես կազմեցի անհրաժեշտ մասերի ցուցակը:

Մասերը, էներգիայի նոր աղբյուրը եւ հազարումի մանր բաները խնամքով դասավորված էին նավում: Նայելով էկրանին՝ ես մանրակրկիտ ստուգեցի բոլոր մասերը, նախքան դրանք կդրվեին մետաղյա արկղի մեջ: Լուսաբացից առաջ, գիշերվա ամենամութ ժամին, հզոր «աչքը» արկղը իջեցրեց տաճարի կողքը եւ աննկատ սլացավ:

«Լրտեսի» օգնությամբ ես հետեւում էի, թե քրմերը ինչպես են փորձում այն բացել: Երբ նրանք համոզվեցին, որ իրենց ջանքերն ապարդյուն են, արկղի մեջ թաքցված դինամիկի միջոցով հրաման արձակեցի նրանց: Գրեթե ամբողջ օրը նրանք չարչարվեցին, ծանր արկղը վեր բարձրացնելով աշտարակի նեղլիկ աստիճաններով, իսկ այդ ընթացքում ես կուշտ քնեցի: Երբ արթնացա, արկղն արդեն հասել էր փարոսի դռներին:

Նորոգումն ինձնից շատ ժամանակ չխլեց: Կուրացած քրմերը աղերսալի տնքում էին, երբ ես բացում էի միջնորմները, որ հասնեմ ռեակտորին: Ես նույնիսկ հատուկ սարքավորում դրեցի խողովակի մեջ, որ ջուրն օժտվի սողուններին թարմացնող ռադիոակտիվությամբ, որպիսին ուներ նախկին Սրբազան աղբյուրը: Այդքանով ավարտվեց այն աշխատանքը, որ ինձնից պահանջվում էր անել: Ես չրխկացրի անջատիչը, եւ ջուրը նորից սկսեց հոսել:

Մի քանի վայրկյան ջուրը բլթբլթում էր չոր խողովակների մեջ, իսկ հետո բուրգի պատերից դուրս լսվեց մի ոռնոց, որից ցնցվեց նույնիսկ նրա քարե մարմինը: Ձեռքերս վեր կարկառելով՝ ես զնացի հանձնվելու աչքերս այրելու արարողությանը:

Կուրացած մողեսները դռան մոտ ինձ էին սպասում, եւ նրանց տեսքն ավելի ողորմելի էր, քան առաջ: Դրա պատճառը ես հասկացա, երբ փորձեցի բացել դուռը. այն ամուր պատնեշով փակված էր մյուս կողմից:

— Վճռված է,— ասաց մի մողես,— որ դու հավերժ մնաս այստեղ եւ հետեւես Սրբազան աղբյուրին, իսկ մենք կմնանք ու կծառայենք քեզ:

Հրապուրի՛չ հեռանկար է՝ ընդմիշտ բանտարկված մնալ փարոսի մեջ, երեք կույր մողեսների հետ միասին: Չնայած նրանց հյուրընկալությանը, ես չէի կարող այդ մեծարանքն ընդունել:

— Ինչպե՛ս: Դուք հանդգնում եք բանտարկել ձեր նախնիների պատգամաբերի՞ն:

Ես միացրի դինամիկը ողջ ուժգնությամբ, եւ թրթռոցից քիչ մնաց գլուխս պայթեր:

Մողեսները սարսափահար կծկվեցին, իսկ ես լազերի բարակ ճառագայթն ուղղեցի դռան կողափայտերին: Լսվեց փլվող պատնեշի դղրդոցն ու ճարճատյունը, եւ դուռն ազատվեց: Ես բացեցի դուռը: Կույր քրմերը չէին հասցրել ուշքի գալ, երբ նրանց հրելով դուրս գցեցի:

Նրանց կոլեգաները կանգնել էին սանդուղքի ներքեւում եւ հուզված աղմկում էին, մինչեւ որ ես ընդմիշտ զոդեցի դուռը: Վազելով բազմության միջով, ես կանգ առա քրմապետի առաջ, որը դարձյալ պառկած էր իր ավազանում: Նա դանդաղ սուզվեց ջրի տակ:

— Ինչպիսի՛ անպատկառություն,— գոռացի ես: Մողեսը ջրի տակից պղպջակներ էր բաց թողնում:— Նախնիները զայրացան եւ ընդմիշտ արգելեցին ձեզ մտնել ներքին աշտարակը: Ի դեպ, նրանք այնքան բարի են, որ աղբյուրը թողեցին ձեզ: Հիմա ես պետք է վերադառնամ… Շուտ վերջացրեք արարողությունը…

Դահիճն այնքան վախեցած էր, որ տեղից չշարժվեց: Ես նրա ձեռքից խլեցի շիկացած երկաթե ձողիկը: Երբ ձողը դիպավ այտիս, պլաստիկատե մաշկի տակից աչքերիս վրա իջավ թիթեղիկը: Հետո շիկացած երկանթ ամուր սեղմեցի կեղծ ակնախնձորներիս, եւ պլաստիկատն արձակեց այրվող մսի հոտ: Ամբոխը հեծկլտաց, երբ ես մի կողմ նետեցի երկաթը եւ, սայթաքելով, մի քանի շրջան կատարեցի: Պետք է խոստովանեմ, որ այնքան էլ վատ չէի խաղում կույրի դերը:

Վախենալով, որ մողեսների գլխով հանկարծ մի ուրիշ պայծառ միտք կարող է անցնել, սեղմեցի կոճակը, ու հայտնվեց իմ պլաստիկատե պտերոդակտիլը: Պարզ բան է, որ ես չէի կարող նրան տեսնել, բայց երբ նրա ճանկերի սողնակները կառչեցին իմ ուսերը ծածկող պողպատե թիթեղներին, զգացի, որ նա այստեղ է:

Աչքերս այրելուց հետո ես շրջվեցի ոչ այն կողմը, ու իմ թեվավոր գազանը ետեւի կողմից բռնեց ինձ: Ես ուզում էի թռչել գնալ արժանապատվությամբ, կույր աչքերս պետք է նայեին մայր մտնող արեւին, այնինչ դեմքով շրջվել էի բազմության կողմը: Բայց ես արեցի այն ամենը, ինչ կարող էի՝ ողջույն հղեցի մողեսներին: Հաջորդ ակնթարթին արդեն շատ հեռու էի:

Երբ հանեցի պողպատե թիթեղը եւ անցքեր բացեցի այրված պլաստիկատի մեջ, բուրգը սրնթացորեն փոքրացավ իր չափերով. նրա հիմքում բլթբլթում էր աղբյուրը, իսկ սողունների երջանիկ ամբոխը թավալվում էր ռադիոակտիվ ջրի մեջ: Ես սկսեցի մտածել, թե արդյո՞ք արել եմ ամեն ինչ:

Նախ, փարոսը վերանորոգված է:

Երկրորդ. դուռը ամուր զմռսված է, այնպես որ ոչ մի վնաս, ակամա թե դիտավորյալ, այլեւս չի լինի:

Երրորդ. քրմերը պետք է որ գոհ լինեն: Ջուրը նորից հոսում է, համաձայն օրենքի՝ աչքերս այրված են, քրմերի դասը նորից իր գործն ունի:

Եվ չորրորդ. ապագայում մողեսները, երեւի, կընդունեն նույն պայմաններով մի նոր վարպետի, եթե փարոսը հանկարծ նորից խափանվի: Համենայն դեպս, ես ոչ մի վատ բան չարեցի նրանց: Եթե սպանած լինեի նրանցից մեկնումեկին, ապա հետագայում նրանց կտրամադրեի նախնիների կողմից ուղարկվող պատգամաբերների դեմ:

Նավի մեջ հանելով թեփուկավոր հանդերձս, ես ուրախ էի, որ հաջորդ անգամ այստեղ կթռչի արդեն մի ուրիշ վարպետ: